

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 7 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Տ է Լ Է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւանակ 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Հայտարարութիւնները համար վճարում են
խորաքանչիւր բառին 2 կոպեկ.
Տ է Լ Է Ք օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՂԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Որքան կարելի է շուտ, կարլ Գիտ. Հայոց հարցի առիթով, ջարամիտ գրուածք. Հայոց հարցը և եւրոպական մամուլը.— ՆԵՒՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ռուսաց դրամատիկական ներկայացումները. Նամակ Մեծ-Սալայից. Նամակ Ախալքալաքից. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.— Գուստավ Ֆրեյտագ. Նամակ Խալիպայից.— ՀԵՌԱՎԻԴՆԵՐ.— ԲՈՐՍԱ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԱՐԱԿԱՆ. Նամակներ Թիֆլիսից.

ՈՐԲԱՆ ԿԱՐԵԼԻ Է ՇՈՒՏ

Հեռագրին արդէն լուր բերեց, որ ապրիլի 13-ին, Պետերբուրգում, զօրքերի գլխաւոր հրամանատար Մեծ Իշխանին պալատում, գեներալ-լեյտենանտ Կուրապատկին, որը, ինչպէս յայտնի է, գնացել էր Պարսկաստան Շահին յանձնելու Նորին Մեծութիւն թագաւոր Կայսր Նիկոլայ II-ի ինքնագիր նամակի, կարգադր մի գեկուցումով ժամանակակից Պարսկաստանի մասին մասին, ներկայութեամբ Մեծ Իշխանին Միխայիլ Նիկոլայիւի, Պաւլի Ալեքսանդրովի, Կոստանտին Կոստանտինովի և վարչական ու գեկուցական նշանաւոր անձանց:

Մենք կանգ չենք առնի գեներալ Կուրապատկինի գեկուցման այն մասի վրա, որը վերաբերում է Ռուսաստանի և Պարսկաստանի քաղաքական յարաբերութիւններին և վերջին մի օրինակի նշանակութեամբ.— այլ միայն մի քանի խօսք կասենք գեկուցանողի այն կարծիքներին առիթով, որոնք վերաբերում են մեր և Պարսկաստանի առեւտրական-անտեսական յարաբերութիւններին:

Մատնանիշ անելով այն բանի վրա, թէ ինչ առաջադրութիւն է արել Ռուսաց առեւտուրը Պարսկաստանում, սկսած 1840 թւականից մինչև 1893 թւականը, շեշտելով, թէ այդ առեւտրի տեսակետից ինչ ահագին նշանակութիւն ունեցաւ Անգլիոյ-կասեան և Անգլիական երկաթուղիների շինելը, և ապա մի առ մի թելով այն խոչնդոտները, որոնք արգելում են Ռուս-պարսկական առեւտրական յարաբերութիւնների աստիճանաբար զարգացմանը, գեկուցանողը մի առ մի թելեց այն միջոցները, որոնք կարող են վերացնել այդ խոչնդոտները և նոր զարկ տալ Ռուսաստանի առեւտրական գործողութիւններին և աղբյուրները Պարսկաստանում:

Գեներալ Կուրապատկինի կարծիքով, այդ

միջոցները հետեւեալներն են. 1) Անցկացնել երկաթուղու գիծ Թիֆլիսից Նիքան, Նիքանից Զուլֆա, և ապա Զուլֆայից, պարսկական սահմանագլխից մինչև Թաւրիզ. 2) Կառքի ճանապարհ բանալ Էնզելից մինչև Ղազվին, որտեղից մինչև Թէհրան այդպիսի ճանապարհ արդէն կայ, և կառուցանել Էնզելիի նաւահանգիստը. 3) Կառքի ճանապարհ ննջկացնել Աստարայից Թաւրիզ, Արդաբիլի վրայով, և 4) Լաւացնել Աստարայի և Մէշէղի մէջ եղած կառքի ճանապարհը:

Ձե կարելի չը խոստովանել, որ այն ճանապարհները, որոնց վրա մատնանիշ է առեւտրական Կուրապատկին, վճռական նշանակութիւն ունեն մեր և Պարսկաստանի առեւտրական յարաբերութիւնների համար, և զրանց կառուցանելը մի նոր դարձուի կը բանայ ոչ թէ միայն Ռուսաստանի և Կովկասի, այլ նոյն իսկ Պարսկաստանի առաջադրութեան համար:

Մի կողմից Պարսկաստանի աշխարհագրական դիրքը և միւս կողմից այն քաղաքական պայմանները, որոնց մէջ գտնվում է Իրանի երկիրը Ռուսաստանի վերաբերմամբ, — կասեմ չեն թողնում, որ Ռուսաստանը և յատկապէս Կովկասը այն գլխաւոր ճանապարհ է, որով մուտք պէտք է գործէ դէպի Պարսկաստան, ոչ միայն քաղաքակրթութիւնների արդիւնաբերութիւնը, այլ և նոյն իսկ քաղաքակրթութիւնը, եւրոպական միջոց և կուլտուրան:

Վերջի վերջոյ Կովկասը պէտք է կատարէ այն մեծ միջնորդի դերը, որին պատմութիւնը յանձնել է քաղաքակրթութեան պիտանի լինել Պարսկաստանի խորքերում, և մտքի ու կեանքի յիշատակութիւնն առաջ բերել լճացած, թմրած, փակված կեանքի մէջ, որը ներկայացնում է ամբողջ Պարսկաստանը:

Եւ երբ մեր երկրից կանցնեն դէպի Պարսկաստան երկաթուղու գիծը, երբ կանաւոր ճանապարհները կը հնչեցնեն մեր յարաբերութիւնները այդ երկրի հետ, երբ վերջապէս մեր արդիւնաբերողը, մեր գիւղատնտեսը, մեր վաճառականը, եւրոպական կուլտուրայի գէղեքնով գլխաւորված, հնչուով մուտք կը գործէ Պարսկաստան, — այն օրից կը սկսվի այդ երկրի մէջ նոր կեանք, նոր շարժում, նոր հոսանք: Դա է պահանջում ոչ միայն Ռուսաստանի, այլ Կովկասում և Պարսկաստանի սեփական շահը:

Վրաս Կոտորածի մը զրոյցները կը պտտին. բայց այսպիսի լուրեր այնքան յաճախ հրապարակ կը լին ու կը հերքուին, որ կարելի չէ մէկէն ի մէկ ստոյգ բան մը գիտնալ. կը յուսանք որ այս զեծ-բաղդ լուրը անհիմն էլ:

Պատրիարքարանի և Գրան յարաբերութիւնները օրէ օր աւելի կը ձգուին. այս օրերս պատրիարքարան հասած է դատական գործերու նախաբերութեան մէկ թէ դէքէն, որով պատրիարքարան կը խնդրէ պաշտօնանկ ընել Մուշի վանքէն մէկու վանահայրը և անոր տեղ ուրիշ վարդապետ մը կարգել: Դատական նախաբարդայ վարդապետն ալ կը նշանակէ, կարծեմ Կապանի վարդապետ մըն է: Արդէ վանահայրը այն բացառիկ եկեղեցականներն է, որոնք հայոց աննպաստ վկայութիւններ տալ չեն ուզեր: Դատական նախաբարդը թէն կը գրէ իւր թէ դէքէնի մէջ, որ պատրիարքարանը գէթ այս պարագային մէջ հաւատարմութեան նշան մը տայ, բայց պատրիարքարանի պատասխանը բացարձակապէս մերժողական եղաւ:

Մերժողական պիտի ըլլայ անշուշտ և այն պատասխանը, որ պիտի տրուի Տրապիզոնի առաջնորդին համար, որուն Պոլիս կանչուելը պահանջ

ԿԱՐԼ ՖՈԼՏ

Ապրիլի 25-ին, Ժընէվից, մեր թղթագիրը ստացանք հետեւեալ տխուր հեռագիրը. «Ներէկ վախճանվեց զիտական Ֆոլտ»: Շտապում ենք հաղորդել մի քանի կենսագրական տեղեկութիւններ այդ նշանաւոր զիտականի մասին, որի անունը հռչակված է ամբողջ զիտական աշխարհում:

Կարլ Ֆոլտ ծնվեց Գերմանիայի Գիսէն քաղաքում 1817 թւի յուլիսի 5-ին, ուրեմն նա 78 տարեկան էր: Ֆոլտը ուսումնասիրեց բժշկութիւնը Գիսէնի համալսարանում: Այդ ժամանակից սկսած՝ նա իրան նուիրեց գիտական ասպարէզին, զբաղւում էր այդ զիտական աշխատութիւնների համար նա ապրում էր Պարիզում, Նիցայում, Հռոմում և հրատարակեց գէոլոգիայի մի ձեռնարկ և իր յայտնի «Նամակներ» ֆիզիոլոգիայի մասին՝ գրուածքը: 1847 թւին Ֆոլտ հրաւիրվեց պրոֆէսորի պաշտօնով Գիսէնի համալսարանը, ուր ինքն ուսում էր առնը:

Կարլ Ֆոլտ, բացի զիտական ասպարէզից, մասնակցում էր և իւր հայրենիքը քաղաքական և հասարակական գործերին, և 1848 թւի շարժումներից յետոյ, նա պարլամենտի անդամ ընտրվեց, ուր իսկոյն անցաւ ծայրայեղ ձախակողմեան կուսակցութեան կողմը, և յայտնի էր իւր գեղեցիկ ազդեւ ձախակողմի, որ ազատամիտ մտքերով, որի պատճառով իր կեցիկն նրան պրոֆէսորի պաշտօնից և հարկադրեցին թողնել հայրենիքը:

Կարլ Ֆոլտ տեղափոխվեց Շվեյցարիա և 1852 թւից գէոլոգիայի պրոֆէսոր հրաւիրվեց իւր նոր հայրենիքը՝ Ժընէվի համալսարանը, ուր և մնաց մինչև իւր կեանքի վերջը:

Հանգուցեալը, այդ երկար տարիներ ընթացքում բազմաթիւ զիտական գեղեցիկներ հրատարակեց ընտրիտութիւններից, որոնք աչքի էին ընկնում իրանց մատչելի և գեղեցիկ ոճով և որոնք յայտնի էին ոչ միայն զիտական աշխարհին, այլ ընդհանրապէս բոլոր զարգացած ընթերցող հասարակութեանը:

Կարլ Ֆոլտ իւր նոր հայրենիքից մեծ հետաքրքրութեամբ հետեւում էր Գերմանիայում տեղի ունեցող քաղաքական և հասարակական գործերին և արձագանք էր տալիս միշտ, յայտնելով իւր կարծիքները:

Ջած է կառավարութիւնը պատրիարքարանէն: Կերի թէ Նիլիէ վարդապետը կրակու ըսող մը խօսած է և հետեւեալն այն եղեր է որ տեղական կառավարութիւնը զայրանալով Գրան գրած է և խնդրել անկէ ծաղուտ առած է: Պատրիարքը Տրապիզոնի առաջնորդին գրեց տեղեկութիւններ ստանալու համար, որպէս զի աւելի զիտակցութեամբ պատասխան գրէ:

Մինչ այս մինչ այն, կառավարութիւնը իւր հին վարպետութեանց կը դիմէ, այն տղայամտութեամբ թէ անոնցմով պիտի ճնշէ Եւրոպայի հանրային կարծիքը: Ապրիլ 14-ի թիւը թերթերը հրատարակեցին Պալլեմէնթը գրուած գովաբանական ուղերձ մը, սուլվանին ուղղուած, մարտ 3 թուականով: Պալլեմէնթը Պոլսէն երկու օր հետո է. այդ ուղերձին հրատարակութիւնը 40 օրուան մէջ կը լլայ:

Պալլեմէնթը հայաբնակ կեդրոն մը չէ. խառնութեան խեղճ մարդիկ, որոնք բան մը չեն գիտեր աշխարհէն և կառավարութեան ճնշումին տակ կը ստորագրեն թերթերէն թղթեր, զորս և ոչ իսկ կրնան կարգաւ: Երբ այս կատակերգութեանց վերջը:

Բանտէն արձակուած եկեղեցականներէն Ֆոլտը

Երեւի շատերը յիշում են այն յօդուածները, որ հանգուցեալը գրեց Փրանս-պրուսական պատերազմից յետոյ Գերմանիայի դէմ, այն պատճառով, որ նա Էլզաս-Լոթարինգիան խլելով Ֆրանսիայից, միայնեց Գերմանիային: Հանգուցեալը Գերմանիայի այդ քայլը կորստաբեր և վնասակար էր համարում Գերմանիայի համար:

Իւր երկարամեայ արդիւնաւէտ գործունէութեամբ Ֆոլտը գրաւեց մի պատկառելի տեղ՝ զիտական աշխարհի մէջ:

ՀԱՅՈՑ ՀԱՐՅԻ ԱՌԻԹՈՎ

Անգլիական հասարակութեան հետաքրքրութիւնը հայոց հարցի վերաբերութեամբ պահպանվում է մի կողմից այն թղթագիրութիւններով, որ ստացվում են թիւրքաց Հայաստանից և Կ. Պոլսից, միւս կողմից պարսկական հարցապնդումներով և մի շարք զանազան ժողովներով ու դատախառնութիւններով:

Առանձին ժողովների և դատախառնութիւնների թիւը այնքան շատ է, որ նրանց մասին միայն յիշատակել կարող ենք: Այդ ժողովները, բացի Լոնդոնի զանազան թիւրքաց, տեղի ունեն և դատական զանազան քաղաքներում:

Ապրիլի 9-ին, Բերմինգհեմ քաղաքում, Զրեման Ուայթի նախագահութեամբ, տեղի ունեցաւ մի ժողով, ուր պրոֆէսոր Թուրայանը, որը լաւ ծանօթ է թիւրքացիներին, որով կարգիւն, մի մանրամասն գեկուցում կարդաց իւր հայրենակիցների դրութեան մասին և նկարագրեց այն սարսափները, որ կատարվում են թիւրքաց Հայաստանում:

Լոնդոնից, ապրիլի 19-ից, հաղորդում են, «Ներէկ Զրեմանի նոր եպիսկոպոս Պերսիպլը մի չեղած նորութիւն մտորեց» իւր աթոռ նստելու օրը: Առհասարակ ընտրված է, որ այդ օրը եպիսկոպոսը մի ընդդոյ և բաւական անդոն ձառ է առում, բայց նոր եպիսկոպոսը չը հետեց այդ սովորութեան և մի խիստ վշտացած ձառ խօսեց հայոց հարցի վերաբերմամբ:

Նա ստաց, թէ ինքն ցանկանում է իւր առաջին հրաւերով ամեն մի անգլիացու ու շարքութիւնը դարձնել այն ամբողջութեամբ զազանութիւնների վրա, որ կատարվում են Հայաստանի քրիստոնեաների վերաբեր-

դի (Կիլիկիա) ծերունի վանահայր Նիկողոս եպիսկոպոս քանի մը ընկերներով Պոլիս հասաւ:

II

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԻԱՅԻՑ

Բաղէշ, մարտի 5-ին

Անցած յունվար, փետրվար ու ներկայ մարտ ամիսները հայերուն համար յոյսերու և ողորութեան ամիսներ են: Այն օրից, երբ Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի պատուիրակները ոտք կոխեցին Մուշ, ճնշված ժողովուրդը ազատ շունչ քաշեց:

Խնուսից, Ալաշկերտից, Բուսնդից, և առհասարակ Մուշի դաշտի զանազան կողմերից անթիւ բողոքներ թափվեցան Մուշ, չը նայած որ տեղական իշխանութիւնը ամեն հնար գործ կը գնի, որ եւրոպական պատուիրակներին հետ ոչ ոք հասնի իւր անակցութեան չանէ:

Տղերիս գրողին, որ եղել է այս կողմիւ շատ տարի առաջ էլ, դժուարահաստալի կը թվայ այն փոփոխութիւնը, որ այդ ժողովուրդի մէջ ներկայում է այս երկու ամսուայ մէջ: Գեղյոկն էլ, քաղաքացին էլ լեցված են մի անսովոր յոյ-

ԲԱՆԱՍԱՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ԹԻՒՐԻԱՅԻՑ

I

Կ. Պոլիս, ապրիլի 17-ին

Ձեմ գիտեր որոնք են այն աղբիւրները, ուսկից կը լինի ժողովուրդը վատեցնելու լուրերը, իրողութիւն է թէ քանի մը օրէ ի վեր սրտաբեկութիւն մը կը տրի, մինչև իսկ պատրիարքարանի շրջանակներում մէջ, այն վախով, թէ եւրոպական համաձայնութիւնը, հայոց խնդրին առթիւ, խզւած է. սակայն Պետերբուրգէն և Լոնդոնէն հասած լուրերը շատ գոհացուցիչ են. այս մասին կրնամ վստահանալ ձեզ:

Պոլսոյ օրուան լուրերը բացառիկ կարեւորութիւն մը չունին. քանի մը օր առաջ Անգլիոյ գնապետական քարտուղարներն մէկը պատրիարքարան գալով, չորս ժամու չափ տեսակցեցաւ պատրիարքին հետ. հարստահարութեանց տեղեկագիրները զլուստր նիւթ կաղմեցին այս տեսակցութեան: Քանի մը օրէ ի վեր շատ տխուր լուրեր կը շրջագային վան պատահած դէպքերու:

լուծմամբ: «Եթէ մենք միաձայն չը բողոքենք և չը կանգնանք թիւերին, մենք էլ այդ յանցանքներին մասնակից կը համարվենք: Բերլինի կոնգրեսին սուղ թանկ խոստացել էր կարգ և ապահովութիւն մտցնել երկրի մէջ, սակայն Հայաստանի զինուորականները և հազարաւոր ըսպանականները, այնպիսի քրիստոնեաների, ինչպէս մենք ամենքս ենք, կանանց բռնաբարումը, մահուաների կոտորածը վկայում են, որ թիւերը մոլորականութիւնը և լրբութիւնը հասել է իր գագաթնակէտին: Անգլիացիները խայտառակութեան մեծ բիծ կը վերցնեն իրանց վրա, եթէ վրէժխնդիր չեն լինի այդ սարսափների համար»:

Պրեսիվալի ճառը մեծ խոսակցութեան առիթ է դարձել:

Լոնդոնի վեստմինսթեր Պարկ Զեպուլում տեղի ունեցաւ մի բազմամարդ ժողով:

Այլիֆորդ հոգևորականը ցաւ յայտնեց, որ կառավարութիւնը մինչև այժմ չէ հրատարակում հրապարտների հաղորդագրութիւնները:

Ժողովը որոշեց՝ յայտնել կառավարութեան, որ աչքի առաջ ունենալով այն հանգամանքները, թէ Թիւրքիան ամբողջ տանկից տարվայ ընթացքում չը կարողացաւ կարգ հաստատել Փոքր-Ասիայում, կառավարութիւն է զգացվում անյապաղ բարենորոգումներ մտցնել Փոքր-Ասիայի հայաբնակ զաւառների տեղական վարչութեան մէջ:

Ամերիկայի Մասսաչուսեթս նահանգի Թիլէքսթըր քաղաքում զուգարկեց մի ժողով, որ կայացրեց հետեւեալ որոշումը. «Հայաստանից ստացած նամակներից տեղեկանալով, որ այնտեղ կատարվել են մեծ կոտորածներ և սպանվել են անմեղ և անզեն հայեր թէ մեծ, թէ փոքր, թէ աղամարդ, թէ կին, որ ամերիկական հպատակութիւն ընդունած անձանց թոյլ չէ արվում այցելել իրանց ազգականներին Փոքր-Ասիայում և որ ամերիկական միտնիստների դպրոցները ապահովութիւն չեն վայելում, որոշեց յայտնել կառավարութեան, որ այդպիսի վիճակ անկարելի է տանել և որ հարկաւոր է ուրիշ կառավարութիւնների աջակցութեամբ՝ ապահովել հայերի վիճակը, վերականգնել ամերիկահպատակների իրաւունքները, որ նրանք կարողանան ազատորէն Թիւրքիայից այցելել և այնտեղ ապահով ապրել»: Այդ որոշման մի պատճէնը ուղարկվեց Գրեշամին, միւսը Անգլիայի արտաքին գործերի մինիստրութեան և երրորդը «Daily News» լրագրի խմբագրութեան:

Ուսար քաղաքի հայերը յորինել են մի թատերական դրուածք «Ջալալդին» անունով, որ ներկայացվեց Բոստոն քաղաքում: Ներկայացումը զբաւեւ էր մեծ բաղմունքներ:

ԶԱՐԱՄԱՏ ԳՐՈՒԱԾՔ

Անգլիական «Daily Graphic» և մի քանի ուրիշ լրագրների ապրիլի 19-ի համարում տպված է «Բէյրութի գործակալութեան» սեփական թղթակցի մի անմիտ, ստերով և զրպարտութիւններով լի թղթակցութիւն, որ կարելի էր ա-

սով և օգետութեամբ: Կը տեսնէք զիւզացի հայ երիտասարդներ, որ երգելով, խաղ կանչելով իրանց դաշտային աշխատանքը կը կատարեն, քուրդի հետ վիճ կը սկսեն, կը սպառնան, — այդ այն ժողովուրդը, որ շատ տարիներից ի վեր երգելու փոխարէն արտասուք կը թափէր, և քիւրդին տեսած ժամանակ աչքերը գետին կը գցէր:

Տեղական իշխանութիւնը խիստ շատ լրտեսներով շրջապատեր է եւրոպական պատուիրակները, — որ իրանք էլ գիտեն, — բայց չը նայած դրան, պատուիրակները աշխատում են, հնար եղածին չափ, յարաբերութեան մէջ մանկ հայերի և առհասարակ քրիստոնեաների հետ: Թուականիցս մի քանի օր առաջ եւրոպական ներկայացուցիչները այցելեցին Մուշի բոլոր եկեղեցիները, վարժարանները, այցելեցին և Մուշի ազգային առաջնորդները:

Փետրվարի 16-ը Բաղէշի համար մի պատմական օր է: — Թահսին փաշայի պաշտօնակալութեան լուրը կայծակի արագութեամբ տարածվեցաւ ամեն կողմ, և երկու հակադրութեան առաջ բերաւ: — Նախ թիւրք կառավարութեան պարտութիւնը և լքումը, և երկրորդ՝ հայերի անսահման

նուանել խեղադարձի յիշատակարան, եթէ նրա ետեղ թաղված չը լինէին չարամիտ և նենգամիտ նպատակներ:

Այդ թղթակցից պատմում է, որ իբր թէ պտտել է ամբողջ Փոքր-Ասիան, կովկասը և Պարսկաստանը, ծանօթացել է հայոց հասարակութեան զանազան խաւերի հետ և նկատել է, որ բոլոր տեղերի հայերը մեծ մասնակցութիւն ունեն այն գործողութիւններին մէջ, որ կատարվում են Փոքր-Ասիայում, յատկապէս թիւրքաց Հայաստանում:

Նա պատմում է առաջակներ, թէ հաւաքվում են մեծ գումարներ, հազարաւոր հրացաններ կան, և որ ամեն տեսակ նախապատրաստութիւններ են լինում և այլ և այլն: Նա ստուեր է գցում զանազան բարեգործական նպատակով տրվող ներկայացումներ վրա: Մի խոսքով անպատմելի լրբութեամբ մի շարք զրպարտութիւններ է շարադրում՝ յայտնի իրաւորութիւն գործելու դիտաւորութեամբ: Տարրական ազնւութիւնը պահանջում է, որ թղթակցիցը, նախ քան այդպիսի մեղադրանք թափելը, ամեն մի երեսից խոր ուսումնասիրէր, այս կամ այն անձից լսած դատարկ խոսքերը ստուգէր, և ոչ թէ դէտեց դէտեց լսած ամեն մի յիւստիութիւն հրատարակէր, իբրև մի լուրջ ուսումնասիրութիւն, իբրև փաստ, ինչպէս նա անուանում է իր թղթակցութիւնը:

«Բէյրութի գործակալութիւնը» մի քանի փոփոխութիւնով է զբաղված: Եթէ, իբրեւ, նա մի թղթակցից ունի, որ գրում է այդ բոլորը, ուրեմն նա խաբար է մի չարամիտ քաղաքականի կողմից, որին ճշմարտութիւնը չէ գրաւում, այլ բոլորովին ուրիշ միտումներ Սակայն, մեղ թղթակցից է, որ նենգամիտը, չարամիտը հէնց ինքը թղթակցիցն է, որը կամենում է ցոյց տալ, թէ նա եղել է ամեն տեղ և թէ հրաւր, և Ներսէս, և Էջմիածին, և Հայաստան, և Կ. Պոլիս: — որ ինքը անձամբ է ամեն բան ստուգել: — բայց պարզ երևում է, որ նա այդ բոլորը գրել է, առանց այդ տեղերում լինելու, այլ միայն իր նենգամիտ և նախամտածած նպատակին հասնելու համար...»

Եւ այդ պատճառով, նրա գրած ամբողջ պատմութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի մեծ սուտ, մի միստիֆիկացիա...

Խորհուրդ ենք տալիս «Բէյրութի» թղթակցին մի փոքր զգուշ լինել, և այդպէս անբարեխիղճ կերպով չաղաւաղել փաստերը, ապա թէ ոչ մի օր իր անձնաւորութիւնը կը բացվի, — և այն ժամանակ խայտառակութիւնը կատարեալ կը լինի:

ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ ԵՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՍՈՒՂԸ

Գլադստոնը իր գահնակութիւնը յայտնեց այն բանի առիթով, որ իր հին բարեկամները, Արգայ-լեան և Վենետիկի նախկին ղեկավար այնպատում են կազմակերպել մի իսկական ազգային բողոք թիւրքերի բարբարոսական ընթացքի դէմ Հայաստանում:

«Թիւրքերի վարմունքները, — ասում է Գլադստոն, — անխնայաբար են և վրդովում են մարդկային սիրտը. նրանք անձնելի արատ են գցում թիւրքաց օֆիցերների և զինուորների վրա, որոնք ոչ միայն կատարել են չարագործութիւններ, բայց և աշխատել են ծածկել նրանց»:

Գնծութիւնը և ուրախութիւնը Այդ լուրը շահութահար արաւ կառավարչական պաշտօնականներին, այնպէս որ կառավարութեան գործերը մի քանի օրով դադարեցին: Բաղէշի բանտերը, որ լցված էին ամեն կարգի և տեղի հայերով, անմեղ, մեղաւոր, մեծ, փոքր, «ապստամբ», աւազակ, թէ հարստահարված, — մի րօպէում ուրախութեան աղաղակներով լցվեցին, երբ իմացան Թահսին-փաշային հեռացնելու լուրը:

Եւրօպական պատուիրակներուն տրվեց, — մի օրինակ էլ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանին զրկվեց, — այն յայտարարութիւնը, որ Թահսին-փաշան ծննդեան տօնից առաջ ուղում էր հայերին ստորագրել տայ: Այդ յայտարարութեան բովանդակութիւնը այս է, թէ Անգլիոյ հիւպատոսը Սասունի կողմերից վերադառնալով, Բաղէշի մէջ աշխատում էր հայերին զրգուել և ապստամբեցնել թիւրք կառավարութեան դէմ: Սակայն հայերը այդ յայտարարութիւնը չը ստորագրեցին, և այդ պատճառով էր, որ շատերը բանտարկվեցին:

Եւրօպական ընդհանրին տրվեց և Համբարձում Պոյաճեանի՝ Սասունի յայտնի հերոս Մուրաթի գործը: Թահսին-փաշայի պաշտօնակն լինելուց ա-

հացի Գլադստոնից, արեւելիսկոպոս կրօնի և ցանկութիւն յայտնեց, որպէս զի իրան ևս մտցնեն այն անձանց ցուցակում, որոնք բողոքում են թիւրքաց զաղանութիւնների դէմ Հայաստանում և որոնք պնդում են, որ Բ. Գլադստոնը գործէ Բերլինի դաշնագրով նրա վրա դրված պարտաւորութիւնները:

Այն անձանց ցուցակում, որոնք ճառեր կարտասանեն Լոնդոնի հայկական միախնդում, մայիսի 7-ին, գտնվում են, ի միջի այլոց, Սենտ Ասաֆա և Գերեսֆորդ եպիսկոպոսները, լեդի Հէնրի Սոմէրսէտ, Լիվերպուլի լորդ-մէրը, դոկտոր Ալաֆֆորդ, պրօֆէսոր Բիտտ, և ուրիշներ:

Բերլինում քաղաքում, կուրի նախագահութեամբ տեղի ունեցաւ մի ժողով, որ նուիրված էր երկու խնդիրների՝ հայկական և Չանգլիքարի խորհրդական Օսլերը նախ ինչեցեցեց ժողովականներին 1877 թ-ի դէպքերը, երբ Ռուսաստանը պաշտպան էր կանգնած Փոքր Ասիայի քրիստոնեաներին, իսկ Անգլիան հաւատարմով թիւրքերի խոստումներին: Դանձն առաւ պաշտպանել թիւրքերին. և ապա տեսութիւն անելով տասնվեց տարվայ գործերին, ասաց, որ քրիստոնեութիւնը երբեք այնքան անարդարեք չէ եղել, ինչպէս այս տասնվեց տարում: «Միթէ թիւրքերը դեռ պէտք է շարունակեն իրանց եղանակագործութիւնները հայերի վերաբերմամբ: Սպանված մարդկանց արիւնք, անպատուած կանանց պատիւը, խեղդած երեխաների անմեղ մարմինները բարձրաձայն աղաղակում են: Ի՞նչ պէտք է պատահականեք այդ բոլորին, միայն մի պատասխան կայ, — որ այդ դրութիւնը պէտք է հիմնովին փոխվի, որպէս զի անկարելի լինի այդպիսի խայտառակութիւն այսուհետեւ»:

«Newcastle Daily Journal» իր ապրիլի 1-ի համար ւմ տպագրել է մի ընդարձակ տեղեկագիր Սասունի անցքերի մասին, որ ստացել է յատուկ թղթակցից, Բիթլիսի գաւառի Խնձորոսի գիւղից:

Մանրամասն պատմելով բոլոր անցքերը, թղթակցիցը հետեւալ եղբայրացութիւնն է անում. «Անկարելի է հերքել, որ այստեղ եղել է մի մտածված ծրագիր, երկար ժամանակ նախապատրաստված և վերջապէս գործադրված այն դիտաւորութեամբ, որ բոլորովին ոչնչացնեն այդ երկրի 30-ից մինչև 40 հազար բնակիչներին: Դա մի նախորդված փորձ էր իսպառ ջնջել աշխարհի երեսից Սասունի բնակիչներին, և մի րօպէ անգամ չը պէտք է մոռանալ, որ այդ ծրագիրը յղ-դացվել է Կ. Պոլսի բարձրագոյն կառավարութիւն գիտութեամբ և նրա կատարելով հաւանութեամբ, և բոլորովին այդ կառավարութեան մեղքը չէ, եթէ ծրագիրը իրագործվեց մասամբ միայն»:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍԱՑ ԴՐԱՄԱՏԻԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

Թիֆլիսի հասարակութիւնը վաղուց սպասում էր «Madame sans gêne» պիեսի ներկայացման, որ մեծ աջողութիւն է ունեցել ոչ միայն Ֆրանսիական բեմի վրա, այլ և առհասարակ եւրօպական թատրոններում:

Մուրաթի համար, որ Սասունում բռնված և իր ընկերներով բանտարկված էր Բաղէշի մէջ, — մահվան պատժի վիճակ էր արձակված: Սակայն նախ քան նրան կախաղան հանելը, Կ. Պոլսից եկած հրամանի համաձայն, աշխատում էին նրան ինչ թողթ առնել, որ նա ապստամբեցրել է սասունցիներին անգլիական հիւպատոսների դրդմամբ, որոնք նրան խոստացել են զենք, փող և օգնութիւն, եթէ հայերը ապստամբվեն, — նոյն իսկ բանտապետը, զինքն ժամանակ, նրան վախեցնելու համար, երկու անգամ կախաղան է բարձրացրել: — բայց անընկճելի Մուրաթը մերժելով մերժել է այդ տեսակ սուտ ցուցմունք տալ:

Թահսինի պաշտօնակն լինելն յետոյ, թէ Մուրաթի, և թէ բոլոր բանտարկեալների վիճակը թեթեւացաւ. նրանց պարանոցի և ձեռքերի ու ոտքերի շղթաները հանեցին, և թոյլ տուցին, որ մի փոքր շունչ ընդունեն: Հաստատ պատմում են, որ բանտարկեալներն էլ բողոքներ են հասցրել եւրօպական ընդհանրին:

Պաշտօնակն վալիի փոխանորդ Լոմէր պէյ անընդհատ դանդաղաներ և բողոքներ է ստանում: Պարզվել է, որ միայն «քաղաքական» գործերի

որ մեծ աջողութիւն է ունեցել ոչ միայն Ֆրանսիական բեմի վրա, այլ և առհասարակ եւրօպական թատրոններում:

Առաջին ներկայացումը տեղի ունեցաւ երկուշաբթի, ամսիս 24-ին, և երկրորդը՝ երեքշաբթի, ամսիս 25-ին, Թիֆլիսի արքունական թատրոնում, որը երկու անգամ էլ լի էր հանդիսականներով:

«Madame sans gêne» ներկայացվել է Ֆրանսիական նշանաւոր թատերագրող Մարքոս Մորօի հետ միասին: Նիթը վերցրած է Ֆրանսիական նորագոյն պատմութիւնից, իսկ տիպերը, անձնաւորութիւնները, խոսակցութիւնները նոյն իսկ ժամանակակից նշանակութիւն ունեն:

Պիեսը բեմական մեծ արժանաւորութիւններ ունի, հանդիսականը չէ ձանձրանում պիէսից, բայց որ գլխաւորն է մի առանձին հրճուանք է զգում այն յաղթանակից, որ ժողովրդից դուրս եկած ազնիւ և աշխատասէր բնաւորութիւնները տանում են թուլամորթ, բայց հպարտ արտօնեալներ լի վրա:

Պիէսի համառօտ բովանդակութիւնը հետեւեալն է: — Մի լուսացաբար կին՝ Կատրին իւլէ, մարդու է դնում մի սպայի՝ Լեֆեմի անունով: Լուսացաբարը գոհ և ուրախ ապրում է իր ամուսնու հետ իր հասարակ արհեստով: Բայց հանգամանքները փոխվում են: Սկսվում են Նապոլէոն մեծի այն նշանաւոր արշաւանքները, որոնք ամբողջ Եւրօպան խոտորեցրին այդ մարդու առաջ: Լեֆեմը իր կնոջ հետ մասնակցում է այդ արշաւանքներին, կատարում է անթիւ բազմութիւններ և ստանում է մարշալութիւն: Նրա կին Կատրինը դառնում է դքսուհի և պարտաւոր է իր աստիճանին համապատասխան նիստ ու կաց ունենալ, ընդունել և հիւրասիրել բարձրաստիճան անձանց: Բայց այդ անսովոր և շատ ձեւական պարտաւորութիւնները, որոնց չէ կարողանում ընտելանալ Կատրինը, նրան անախտժ վիճակի մէջ են դնում: Պաշտօնական և բարձրաստիճան ընտանիքներ նշանաւոր և արտասովոր են, պիւրաբարում են և զանազան փոփոխում են նոյն իսկ կայսրին: Նապոլէոնը առաջարկում է Լեֆեմին, կարգ ու պատշաճութիւն պահպանելու համար, բաժանվել կնոջից: Ահա այդտեղ Կատրինը, այդ ազնիւ, սիրող կինը, այդ անկեղծ, չը փչացած անձնաւորութիւնը սկսում է կուլ մղել պաշտակականների դէմ և երեսով Նապոլէոնի մօտ իր արդար և զգացված զայրույթով, իր մաքուր հայեացքներով կեանքի վրա, ազդում է կայսրի վրա և խանգարում է թշնամիների լարած միջնադարութիւնները:

Գերաստունի Մարտինովան Կատրինի դերում շատ լաւ էր: Նա ներկայացրեց լուսացաբարին սրան յատուկ անտաշ ու կոպիտ ձեւերով, կոշտ և կոպիտ խոսակցութիւններով: Բայց երբ բանը դալիս էր այնպիսի րօպէների, որտեղ նա պէտք է կուլ մղել իր զգացմունքներին, իր անձնաւորութեան անխնայութեան համար, նա բարձրանում էր սովորական մակերեսից և այնպիսի զգացված ու կրակոտ խօսքեր էր արտասանում, որ շանթահար էր անում իր հակառակորդներին և հիացնում հանդիսականներին: Գուցէ իր կոպիտ ձեւերի մէջ տիկին Մարտինովան փոքր ինչ չափազանցութիւն էր անում, բայց ընդհանրապէս նա

համար, այսինքն սպառնալով անմեղ մարդոց, թէ նրանք յեղափոխական գործերի մէջ խառն են, Թահսին փաշան կաշառք և փրկանք է վերցրել մինչև 20 հազար «սիլի», ուրեմն առաջ փողով մօտ 200 հազար բուրջի:

Այդ յանդուգն փաշան, Բաղէշից հեռանալու միջոցին, երբ իր ընկերակիցը՝ Թիւրք մեծամեծները և քիւրդ ցեղապետները եկել էին «գնաս բարով» ասելու, առանց երկիւղ կրկնու, առանց ջաշվելու, մի ճառ է լուսում քիւրդ ցեղապետներին և չէյներին առաջ, ասելով, որ դեմուրները վտանգ են սպառնում Մահմէդի կրօնին և նրանց պէտք է կոտորել:

Եւրօպական պատուիրակները Թահսին-փաշայի այդ վարմունքի մասին տեղեկագրել են ուր հարկն է:

Իբրև բնաւորիչ փաստ, կարող եմ հաղորդել հետեւեալը. թիւրքաց ընդհանրապէս զայն տոնապէս արձանագրել է, որ Սասունում կոտորած հայերի թիւը միայն 250 է: Այդ բանը այստեղ ամենքը լսեցին, և նոյն իսկ թիւրքերը ծիծաղում են այդ բացարձակ ստատիստիկան վրա:

Եւր

մասնավորապես, որը պետք է հետևել գործին: Այս
գործը շարունակվի այնպես, ինչպես սկսվել է,
եկող ուսումնական տարում կունենանք մի օրի-
նաւոր ուսումնական:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳՈՒՍԱՎ ՖԻՆԱՆՍ

Այս օրիւ 80 տարեկան զաւակնալ հասակում
վախճանեց Գերմանիայում մեծ ժողովրդականու-
թիւն վայելող և յայտնի վիպասան ու հրապար-
կախոս Գուստավ Ֆրէյտագ:

Ֆրէյտագ ծնվեց 1816 թ.ին Կրէյցբուրգում
(Սիլեզիայում)։ 30 թ.ականներին նա զբաղվեց
փիլիսոփայութեամբ և լեզուագիտութեամբ Բրե-
լաւում ու Բերլինում: 1839 թ.ին Ֆրէյտագ պրի-
վատ-դոցենտի պաշտօն ստացաւ Բրեւսլաւի հա-
մալսարանում, ապա շուտով անցաւ Դրէզդենի
և Լէյպցիգի համալսարանները, ու գիտական
զբաղմունքներին նա միաժամանակ, իր ժամանա-
կը նուիրում էր նոյնպէս գրականութեանը և հրա-
պարակախոսութեանը: 1870 թ.ին Ֆրէյտագ ընդ-
հատեց իր գրականական զբաղմունքները և մաս-
նակեց ֆրանս-պրուսական պատերազմին, որից
օղուտ քաղելով զրեց սեւասարաններ պատերազ-
մական կեանքից:

1872 թ.ին սկսեց հրատարակել նրա վէպերի
շարքը՝ «Նախահայրեր», մի համարձակ և շատ
աղօղ փորձ՝ բանաստեղծութեան օրինակով Գեր-
մանիայի բազմադարեան անցնելու: Նրա գրչին
են պատկանում և Պատկերներ գերմանական ան-
ցնալից, մի շարք գեղեցիկ կերպով գրված մո-
նոգրաֆիաներ, որոնք վէպի պէս են կարգաց-
վում:

ՆԱՍԱՎ ԻՍԼԱՄԻՏՅՈՒՆ

Միլան, ապրիլի 11/23

Այս օրիւ Պիեթրոլից վերադարձաւ Միլան
երգիչ Կոստանեանը և անմիջապէս հրաւիրեց
այստեղի «Allambra» կոչված թատրոնում «Fa-
vorita» օպերան երգելու:

Կերակի օր, ապրիլի 9/21-ին, Կոստանեան եր-
գեց մեծ յաջողութեամբ, իսկ spirtogentil յայտնի
արիան, չորրորդ գործողութեան մէջ, ստիպված
էր կրկնելու համարակութեան խնդիրը: Եւ ճշ-
մարկտ, արժէ լսել պարտնին: Նա երգում է գե-
ղարուեստական մեծ ճաշակով: Թող չը կարծեն հայ
ընթերցողները, որ այդ խօսքերը բնական է, ոչ
սա երիտասարդ երգչի բարեխիղճ գնահատու-
թիւնն է:

Միլան քաղաքը յայտնի է իր բազմաթիւ երգիչ-
ներով, մեծատոներով և զանազան երաժիշտնե-
րով, և ճշմարտն ստանձնող շատ դժուար է մի օր և
երգչի համար երգել այստեղ, որովհետեւ միայն
ժ. Գ. Վալդերը չէ, որ քննում է երգչին՝ այլ նաև վե-
րջիշաղ հեղինակները անձինք:

Մենք անձամբ լսում էինք, երբ նրանցից
մէկը հիացած խօսում էր մեր երգչի մասին, ա-
սելով, թէ այդ երգիչը յիշեցնել է տալիս նրան
հանգուցեալ Gaiat-ին:

Միլան

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 ապրիլի. «Journal de St.-Pe-
tersbourg» լրագիրը հաղորդում է, որ Ռուսաս-
տանի, Ֆրանսիայի և Գերմանիայի բարեկամական
խորհրդի համաձայն, եապոնական կառավարու-
թիւնը պարտաւորեց հրաժարել Ֆէն-Տիէն
թերակղզին վերջնականապէս տրեւոյց:

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 23 ապրիլի: Հաղորդում են, որ
Եապոնիան զիտա որովհետեւ ունի պակասացնել
պահանջները՝ յիշական հողերը իրան գիշերու
վերաբերմամբ, բայց զրա փոխարէն պնդում է
պատերազմական վարձատրութիւնը նշանաւոր
կերպով աւելացնելու վրայ:

ՎԻԵՆՆԱ, 23 ապրիլի: Ընդունելով ունդարա-
կան միջոցաւ նախագահ Բալֆորին, կայսրը այն
միտքը յայտնեց, որ Բալֆորի և Կոմս Կալուսի
մէջ եղած տարաձայնութեանը պետք է լսալա-
ղութեամբ վերջ տրվի:

ՍՕՖԻԱ, 23 ապրիլի: Կորուրդեան պրինցը ճա-
նապարհ ընկաւ Միւնխեն, ուր կը մնայ մի քանի
օր:

ԲԵՐԼԻՆ, 26 ապրիլի: Կայսրը կընդունի ուսաց
զետպան Օստէն-Սալէնին: Գետապանի պատկին կայ-
սերական կանցլէրը այստեղ ճաշ է տալիս:

Միւնխեն հասաւ Կորուրդեան Ֆէրդինանդը և
բոլորական միջոցաւ նախագահը:

ԵՕՎՈԶՍՏԱ, 25 ապրիլի: Եապոնական զաղտնի
խորհրդի անդամները և բարձրատիճան անձինք
հրաւիրված են մասնակցել այն ժողովին, որ կա-
յանալու է այսօր Կիէտոի գլխաւոր բանակում:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Ապրիլի 25-ին

Լճից մինչև 10 ֆունտ արծէ . . .	93	15	4
Բերլինի միւս 100 մարկ . . .	45	40	4
Պարիզի միւս 100 ֆրանկ . . .	36	825	8
Ոսկի . . .	արծէ . . .	7	43
Մաքսային կուպոններ . . .	148	50	4
Բաժնաժ . . .	—	—	—
Բորսային դիսկոնտ . . .	5	8	0
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի . . .	—	—	—
— — — 2-րդ . . .	—	—	—
— — — 3-րդ . . .	—	—	—
4% պետական բնուտ . . .	99	50	4
5% ռուկեայ բնուտ 1894 թ. . .	164	75	4
Արեւելեան 5% փոխառ. 1-ին շրջ. . .	—	—	—
— — — 2-րդ . . .	—	—	—
— — — 3-րդ . . .	—	—	—
— — — 4-րդ . . .	—	—	—
Ներքին 5% առաջին փոխառութ. . .	237	—	—
— — — երկրորդ . . .	225	—	—
5% պետական երկաթուղ. բնուտ . . .	101	1/8	—
4% ներքին փոխառութեան . . .	98	75	4
4 1/2% զրառ. թղթ. ալի. կալ. բանկի 1015/8 . . .	—	—	—
Ալի. կալ. Պետ. բանկի խաղաղութ. . .	—	—	—
Գրառ. թղթ. . .	210	25	4
4 1/2% վիպայի. գիւղ. հող. բանկի. 1015/8 . . .	—	—	—
4 1/2% զրառական թղթեր կալուած. . .	—	—	—
Փոխ. կրեդիտ. բնկի. միտայ. . .	150	—	—
— — — թղթադ. . .	—	—	—
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. . .	101	50	4
բնկերութեան օրիգինալներ. . .	101	50	4
Մոսկվայի քաղաք. օրիգինալներ. . .	100	50	4
Օղէտայի . . .	995	8	—
Թիֆլիսի . . .	101	—	—
Գրառ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի. . .	101	—	—
— — — Բալթիայի . . .	101	—	—

Խաղաղութ. ԱԼԵՔՍԱՆԴԻՐ ԲԱԼԱՆՔԱՐ

Հրատարակելի: Մ. ՄԷԼԻՔ-ԱՂԱՍԱԼԱՆԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ս.ՈՒԱԶԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ
ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆԻ

(Կուկիա, Վրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամէն օր, բացի
կիրակի օրերից:

ԱՌԱՌՕՏԵՐԸ

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆ—11—12 ժ. վերաբու-
ժութեան, սիֆիլիսի և վնասական հիւանդու-
թիւնների:

Գ. Գ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին
և նեարդային:

Կին բժիշկ Ա. Ի. ՍՈՐՈԿԻՆԱ—ՇՆԵՐԲԻՆՆԱ—
10—11 ժ. կանանց և ներքին:

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՆԻ—12—1 ժ. ականջի, կո-
կորդի, քթի և կրծքի: Երկուշարթի, չորեքշա-
րթի և ուրբաթ:

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1 1/2 ժ. ներքին և երե-
խայոց:

ԵՐԵՎԱՆԵՐԸ

ՊՐՕՏԱՍԵՆԻ—5—6 ժ. երեք. հինգ. և չա-
բաթ:

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—6—7 ժ. սիֆիլիսի, մէղի և
սեռական օրգանների հ. ներքին և մարթի:

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆ—7—1 1/2 ժ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ քիմիական և խոշորացուցական
հետազոտութիւններ է անում մէղի, լիւի, ա-
րեան, կաթի և այլն:

Վճար 50 կ. Համալսարնի (Կոմսիլուսի) և
օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԳԵԱՆ: (№ 72)

Լոյս տեսաւ

Ա. ԲԱԼԱՆՔԱՐԻ

ՍԱՍՈՒՆ

զրեցիլը աշխարհադրական քարտէզով:

Գինն է 20 կոպէկ:

Վաճառվում է Մշակի՝ խմբագրատանը
և Կինտրոնական զրաւաճառանոցում:
(№ 39) 5—10

ԿԱԼՈՒԱԾԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԹԱՏՐՈՆ

Այսօր, հինգշաբթի, ապրիլի 27-ին

ԵՐԿՐՈՐԷ ՎԵՐՋԻՆ

ԿՕՆՑԷՐՏ

Աշխարհում միակ հռչակաւոր տէնօր

ԱՆՇԷԼՕ ՄԱՋԻՆԻԻ

Միջոցը 8 1/2 ժամին երեկոյան:

Տոմսակները կարելի է ստանալ Բ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ երաժշտական մագաղինում:

Գլխորդօվայա փողոցի վրայ:

1—1

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՒՆԱՅ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
ԿԱՐ ՈՒ ՁԵՒԻ ԴՊՐՈՅՈՒՄ, Գանձակայա փողոց № 25, նշանակված է երեկոյոց զգեստ-
ների վաճառումը՝ ամիս 27-ին, հինգշաբթի, 28-ին ուրբաթ, 29-ին շաբաթ և 30-ին
կիրակի, ժամը 10—3.
(№ 47) 1—2

Շուտով լոյս կը տեսնի

ՍՈՒԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ

անունով ազգային լիակատար երգարանի առաջին հատորը, չորրորդ տպագ-
րութեամբ: Այս հատորի մէջ, բացի բոլոր գործածական և ժողովրդին յայտնի երգե-
րէց, տպագրվում են նոյնպէս և նոր երգեր, և բանաստեղծութիւններ, և
երգերին վերաբերող արձակ գրութեանքներ, թւով 300-ից աւելի:

Ձեռնարկով դրել մեծութեանը, իւրաքանչիւր օրինակի գինը նշանակում ենք,
կանխիկ վճարող բաժանորդներին համար, մի բուրբիլ:

Օտարաբաղադրայի ցանկացողները թող բարեհաճեն դիմել Բադու, Սոխակի՝
հրատարակչին այս հասցեով. священнику Григорию Григорянцъ, въ БАКУ.

Հրատարակչի՝ Գրիգոր քահանայ Գրիգորեանց

(№ 44)

3—3

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ վարչութիւնը յայտնում է, որ
ընկերութեան կանոնադրութեան § 31 համաձայն, ապրիլի 30-ին, կիրակի, երեկոյան
ժամի 7 1/2-ին, Թիֆլիսի քաղաքային դոմայի գահլիճում նշանակված է ընդհանուր
ժողով, որի պարագմունքի առարկաներն են՝ ա. տեղեկագրի, հաշուի և նախահաշուի
ընթերցումը և հաստատումը. բ. պաշտօնական անձնի ընտրութիւնը. վարչութեան
նախագահի, փոխ-նախագահի, մի անդամի, զրապահի և խմբագրական մասնագործի
երեք անդամների:

Վարչութիւնը ընդ ամին հարկ է համարում յայտարարել, որ վարչական վերջին
նիստը նշանակված է ապրիլի 29-ին, շաբաթ օր, երեկոյան, և մինչև այդ նիստը միայն
կը լինի այն նոր անդամների ընդունելութիւնը, որոնք կը ցանկանան մասնակցել ընդ-
հանուր ժողովին:

Ընկերութեան 1894 թ. տեղեկագիր ստանալ ցանկացողները թող բարեհաճեն
դիմել ընկերութեան գրասենեակը—Բաքու Կապուստանկայա փողոց, առև Գեղեկանօվայի, սկսած
ամիս 24-ից:
(№ 45) 3—3

ԿԱԿԱՕ ԲԼՕՕԿԷՐ

ՍՆԵԴԱՐԻ ԽՄԻՉԲ (գլխաւոր պահեստը Ռուսաստանի համար
«ԵԱՎԱ» Փերմայի մէջ. (С.-Петербургъ, Большая Морская, 38).
Ծախվում է իօթիւր և զեղային ապրանքների բոլոր լաւ մագաղիններում 1/1,
1/2, 1/4 և 1/8 կիլոգրամանոց թիթեղեայ տուփերի մէջ:
(GRAND PRIX) Բարձրագոյն պարգև Անտվերպէնի համաշխարհային ցուցա-
հանգիստում 1894 թ.ին:
(№ 151) 27—50

НЕМЕЦКАЯ ГОСТИНИЦА

HOTEL NIEMIECKI, «ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՐԱՆՈՑ» գտնվում է ՎԱՐՇԱՎԱ-
ՅՈՒՄ, քաղաքի կենտրոնում, նորից վերաշինված, ունի 90 կահաւորված նոմերներ,
որոնց սարք ու կարգը ամենալաւ արտասահմանեան հիւրանոցների սենեակներին է
նման: Նոմերների գինը 50 կոպէկից մինչև 3 ռուբլի օրական, անկողնով և ծառայով:
Հիւրանոցում կայ ընթերցարան-գրադարան, օրակց ստացվում են հայերէն «Մշակ» և
«Նոր-Գար» լրագիրները, հիւրերի համար անվարձ: Կայ բնաստորան, տեղեֆոն, քաղցրե-
ղենների խանութ, լրագիրներ:

Հիւրանոցի մէջ գտնվում են բոլոր երկաթուղային կայարաններում:
(№ 21) 127—130 (շ.)

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ

ԹԻԻՐԲԱՅ ՀԱՅԵՐԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆԸ

ԳԻՆԸ 20 ԿՕՊԷԿ

Թիֆլիսում վաճառվում է «Մշակի» խմբագրատանը, նոյնպէս և Գլխորդօվայա փո-
ղոցի վրա հետեւեալ խանութներում՝ Եփրեմ Գառնուրեանի լաւագների մագաղինում և
Տէր-Յովսէփեանի ծխախոտի խանութում:
(№ 144)